

Թեմա 5. ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Խնայողությունները կարելի է ներդնել նաև արժեթղթերում:

Որպես արժեթղթերի առանձին՝ առավել վստահելի տեսակ կարելի է խոսել **պետական պարտատոմսերի և դրանցում ներդրումների** մասին:

Իսկ ի՞նչ է պետական պարտատոմսը: Պատկերացրեք, օրինակ, որ պետությունը կառուցում ու վերանորոգում է զբոսայգիներ և գրադարաններ: Դրա համար այն ներգրավում է ֆինանսական միջոցներ, իսկ պետական պարտատոմսը դառնում է պարտքի երաշխիք: Ավելի պարզ ասած, պարտատոմսն այն «թուղթն» է, որը այսօր մենք գնում ենք՝ իմանալով, որ սահմանված ժամանակ հետո հնարավորություն ունենք այն վաճառելու և ստանալու ոչ միայն մեր ի սկզբանե վճարած գումարը, այլ նաև որոշակի տոկոսային հավելում:

Տեսնենք, թե ինչ առավելություններ ունեն պետական պարտատոմսերը.

- Նախ, դրանք հեշտ է վաճառել:
- Դրանք ապահովված են պետության կողմից, պետությունը բարձր վստահելիություն ունեցող գործընկեր է:
- Եվ ինչը պակաս կարևոր չէ, պետական պարտատոմսից ստացված եկամուտը չի հարկվում:

Իսկ թույլ կողմերից կարող ենք նշել.

- Քաղաքական ռիսկերը:
- Ինչպես նաև այն, որ ի տարբերություն ավանդային ներդրման՝ նման պարտատոմսերի արժեքը տատանվում է:

Բացի այդ, խնայողությունները կարելի է ներդնել նաև **անշարժ գույք գնելու** միջոցով: Ընդ որում, անշարժ գույք ասելով նկատի ունենք նաև հողատարածքը: Այս տարբերակով եկամուտ կարելի է ստանալ վարձակալության, հողի մշակման/ բերքի վաճառքի և այլ միջոցներով:

Դիտարկենք այս տարբերակի առավելությունները.

- Նախևառաջ, աա համեմատաբար սպահով ներդրում է՝ սեփականության իրավունքով:

- Ինչպես նաև այն ստեղծում է վարձակալական եկամտի հնարավորություն:

Թույլ կողմերից կարելի է առանձնացնել այն, որ

- Նման ակտիվը այնքան էլ իրացվելի չէ, այն դժվար է ցանկացած պահի արագորեն վաճառել և վերածել գումարի:
- Բացի այդ, այն ծնում է պարբերական ներդրումների անհրաժեշտություն
- Եվ, վերջապես, նման ներդրումից ոչ միշտ է հնարավոր ստանալ պարբերական եկամուտ:

Խնայողությունները կարելի է ներդնել նաև **ներդրումային ֆոնդերում**: Իսկ ի՞նչ է սա: Սա կառույց է, որը ներգրավում է միանգամից բազմաթիվ ներդրողների միջոցները և միասնաբար ներդնում է դրանք տարբեր ակտիվներում: Արդյունքում ֆոնդը կարողանում է գեներացնել շահույթ, որից և օգտվում են ներդրողները, այսինքն՝ մենք՝ յուրաքանչյուրս մեր ներդրած գումարի մասնաբաժնին համապատասխան:

Այսպիսի ֆոնդի տեսակ է, օրինակ, կենսաթոշակային ֆոնդը: Այսօր մենք փոխանցումներ ենք կատարում կենսաթոշակային ֆոնդին, իսկ վերջինս, հավաքագրելով բոլորիս միջոցները, միասնաբար ներդնում է դրանք տարբեր ակտիվներում: Իսկ տարիներ անց, երբ յուրաքանչյուրս լինի կենսաթոշակային տարիքում, արդեն ստանալու է վճարումներ ֆոնդի ակտիվներից՝ կենսաթոշակի տեսքով:

Իհարկե կան խնայողությունների ներդրման բազում այլ տարբերակներ ևս, բայց հիշեք, որ ինչ ներդրում էլ որոշեք անել, պետք է հաշվի առնել, որ.

- Խնայողությունը պետք է փող բերի, այլ կերպ ասած՝ լինի եկամտաբեր:
- Խնայողությունը պետք է լինի ձեռքի տակ, այսինքն՝ հասանելի:
- Եվ, վերջապես, խնայողությունը պետք է լինի վերահսկելի ռիսկի տեսանկյունից, այսինքն՝ այն պետք է ապահով լինի:

Բոլոր 3 կետերին լրիվ բավարարող ներդրում գրեթե չի հանդիպում: Այնպես որ շատ կարևոր է որոշել, թե խնայողություն կատարելու որ չափանիշն է մեզ համար ավելի առաջնային՝ գումարը լինի ապահով, հասանելի, թե՞ եկամտաբեր:

Հիշենք նաև, որ խնայողությունը ներդրման վերածելիս կարող ենք մտածել **ձեռնարկատիրական գործունեության մեջ ներդրումներ** կատարելու մասին: Կարևոր

Է հիշել, որ ներդրումը կանխատեսելի ժամանակահատվածում ձեզ պետք է ապահովի
ավելի ավելի շատ եկամուտ, քան, օրինակ, ավանդի դիմաց տոկոսային եկամուտն է,
այլապես ներդրումն արդարացված չէ: